

Արձանագրություն հ. 6

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
14. 11.17 թ. կայացած նիստի:
Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 27-ը:

Օրակարգում՝

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:
2. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստացիա:
3. Ընթացիկ հարցեր:

Առաջին հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները, ովքեր ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեցին իրենց կողմից ղեկավարվող ամբիոնների 2017թ. ընդունված առկա ուսուցմամբ ասպիրանտների գիտական ղեկավարների և թեմաների վերաբերյալ առաջարկություններ:

Գիտական խորհրդի նիստը որոշեց հաստատել ամբիոնների առաջարկները (թեմաների հաստատման քաղվածքները ուղարկվում են ԵՊՀ ասպիրանտուրայի բաժին):

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ նույնպես զեկուցեցին ամբիոնների վարիչները, ովքեր ներկայացրեցին իրենց կողմից ղեկավարվող ամբիոնների հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների մեկ տարվա կատարած աշխատանքը և ատեստավորման արդյունքները:

Որոշեցին հաստատել ամբիոնների որոշումները հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման վերաբերյալ (քաղվածքներն ուղարկվում են ասպիրանտուրայի բաժին):

Ընթացիկ հարցերի շրջանակում հաստատվեցին ֆինանսահաշվային ամբիոնի մագիստրոսական ծրագրերի անվանումների մեջ ամբիոնի կողմից առաջարկվող փոփոխությունները (քաղվածքներն ուղարկվում են ԵՊՀ ուսումնական վարչություն),

ինչպես նաև հրատարակման երաշխավորություն տրվեց Ն.Խաչատրյանի և Ն.Սահակյանի հեղինակած «Ձեռնարկատիրության հիմունքներ.» աշխատանքին:

Ֆակուլտետի գիտխորհրդի
նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր

Ֆակուլտետի գիտխորհրդի
քարտուղար, տ.գ.թ. պրոֆեսոր



Հ.Լ.Սարգսյան

Ա.Հ.Համբարձումյան